

ԵԱՐԵՒՐ

4

ՄԱՐՏԻՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՅԱԼ. ԹՈՒՄՈՒՅՑԱՆ

ՍԱՍՈՒՑԻ
ՂԱՎԻԹԸ



ՀԱՅԱՍՏԱՆ

89;99

5255

R-82

Բայրութ, Հայք,

Ամսականի Դաշտը.

12.

ԿԱՐՄԻՐ ՄԱՐՏԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՀ

391.99


Բ - 89

ՀՈՎՀ. ԹՈՒՐԲԵՅՆ

ԱՎՈԽՎԵԼ Է 1981 թ.

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

Հ 5477
Տ 5255



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՐԵՎԱՆ

1943

О. ТУМАНЯН
Давид Сасунский
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1943

Պատ. Խմբագիր՝ Ո. Զարյան
ՎՖ 04723. Պատվեր 745. Տիրաժ 10000.
Ստորագրված է սպազրության 20/XI—43 թ.
Հայպետհրատի տպարան, Երևան, 1943

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

Առյուծ-Մհերը, դարմով դյուցազուն,
Քառասուն տարի իշխում էր Սասուն,
Իշխում էր ահեղ, ու նըրա օրով
Հավքն էլ չէր անցնում Սասմա սարերով:
Սասմա սարերից շատ ու շատ հեռու
Թընդում էր նըրա հըռչակն ահարկու,
Խոսվում էր իր փառքն՝ արարքն անվեհեր,
Հաղար բերան էր—մի Առյուծ Մհեր:

II

Էսպես, ահավոր առյուծի նըման,
Սասմա սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Ախ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.
Քայց հիմի, եթք որ եկավ ծերացավ,

Էն անահ սիրտը ներս սողաց մի ցավ:
Սկըսավ մտածել դյուցազուն ծերը.
— Հասել են կյանքիս աշնան օրերը,
Շուտով ու հողին կերթամ ես գերի,
Կանցնի ծըխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն և՝ անհուն, և՝ սարսափի, և՝ ահ,
Իմ անտեր ու որբ աշխարհքի վըրա
Ոտի կը կանգնեն հազար քաջ ու դե...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման ետև
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք էր անում հըսկան ծերունի:

III

Մի օր էլ՝ էն դորշ հոնքերը կիտած
Երբ միտք էր անում, երկնքից հանկարծ
Մի հուր-հրեղեն հայտնըվեց քաջին,
Ոտները ամպոտ կանգնեց առաջին:
— Ողջույն մեծազոր Սասմա հըսկային.
Քու ձենը հասավ աստըծու գահին,
Ու շուտով նա քեզ մի զավակ կըտա:
Քայց լավ իմանաս, լիոների արքա,
Որ օրը որ քեզ ժառանգ է աըվեք

էն օր կը մեռնեք քու կինն էր դու էլ
— իր կամքը լինի, ասավ Մհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը՝ մերը,
Բայց որ աշխարհքում ժառանգ ունենանք,
Մենք էլ նըրանով անմեռ կը մընանք:
Հըրեշտակն էստեղ ցոլացավ նորից,
Ու էս երջանիկ ավետման օրից
Երբ ինն տմիս, իննը ժամն անցավ,
Առյուծ Մհերը զավակ ունեցավ:
«Դավիթ» անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախաղեր Զենով Օհանին,
Երկիրն ու որդին ավանդեց նըրան,
Ու կինն էլ ինքն էլ էն օրը մեռան,

IV

Էս դարում Մըսըր անհաղթ ու հըզոր
Մըսրա Մելիքն էր նըստած թագավոր.
Հենց որ իմացավ էլ Մըհեր չը կա,
Վեր կացավ կըովով Սասունի վըրա:
Զենով Օհանը՝ ահից սարսափած,
Թըշնամու առաջն ելավ գլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ ոտները.
— Դու եղիր, ասավ, մեր գլխի տերը,

Ու քու շըվաքում քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք, քո խարջը միշտ տանք,
Միայն մեր երկիր քարուքանդ չանես
Ու քաղցր աչքով մեզ մըտիկ անես:
— ԶԵ՛, ասավ Մելիք, քո ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անեմ,
Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ:

Ու գընաց Օհան՝ բոլոր բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թըրի տակ.
Մենակ Դավիթը ինչ արին-չարին,
Մոտ չեկավ դուշման Մելիքի թըրին:
Եկան քաշեցին՝ թե զուտվ տանեն,
Թափ տըվավ, մարդկանց քցեց դես ու դեն,
Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,
Ապառաժ քարից կըրակ դուրս թըռավ:
— Պետք է սպանեմ էս փոքրիկ ծուռին,
Ասավ թագավորն իրեն մեծերին:
— Թագավոր, ասին, դու էսքան հըզոր,
Թըրիդ տակին է ողջ Սասունն էսօր.
Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,
Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնատ
— Դուք դիտեք, ասավ Մըսրա թագավոր:

Բայց թե իմ զըլխին փորձանք գտ մի օր,
էս օրը վըկա,
Սըրանից կը դա:

V

Էս որ պատահեց, Մեր Դավիթ հըսկան
Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան:
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
Որ նըրա համար՝ թե մարդ, թե մըժեղ:
Բայց վայ խեղճ ուրբին աշխարհքի վըրա,
Թեկուզ, Առյուծի կորյուն լինի նա:
Զենով Օհանին ուներ մի չար կին,
Մին-երկու լըռեց, մի օր էլ կարգին
Իրեն մարդու հետ սկըսավ կովել.
— Ես մենակ հոգի, հազար ցավի տեր,
Ի՞նչ ես ուրիշի որբին տուն բերել,
Նըստեցրել գըլխիս պարապ հացակեր...
Հողեմ գլուխը... ես գերի հո չեմ
Ամենքի քեֆի ետևից թըռչեմ...
Մի կոռ կորցրու, կարգիր մի բանի,
Գընա իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսավ ողբալ ու կոծել,

Իր օրը սըդալ, իր բախտն անիծել.
Թե անբախտ եղավ աշխարհքի միջում,
Ոչ մի տեր ունի, ոչ մարդն է խըղճում...

Գնաց Օհանը երեխի ստի

Մի զույգ ոտնաման բերավ երկաթի,
Երկաթի մի կոռ շալակին դըրած,
Ու արավ Սասմա քաղքի դառնարած:

VI

Քըշեց գառները մեր հովիվ հըսկան,
Ելավ Սասունի սարերն աննըման.

— Է՞յ ջան, սարե՛ր,

Սասման սարե՛ր...

Որ կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-դըմդըմբոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի զազաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան:
Դավիթը ընկավ նըրանց ետեից,
Որին մի սարից, որին մի ձորից—
Աղվես, նապաստակ, գել, եղնիկ բըռնեց,
Հավաքեց, բերավ գառներին խառնեց,
Իրիկվան քըշեց ողջ Սասմա քաղաք:

Կաղկանծ ու ոռնոց, աղմուկ, աղաղակ...
Քաղքըցիք հանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հըբես անհամար գաղան.

— Վայ, հարայ, փախեք...

Մեծեր, երեխեք

Սըրտաճաք եղած,

Գործները թողած,

Որը տուն ընկավ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
Դավիթը եկավ, կանգնեց մեյդանում:
— Վահ, էս մարդիկ ինչ վաղ են քընում.

Հեյ, ուլատեր, հեյ, գառնատեր,
Ելեք, շուտով բացեք դըռներ.

Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քսանն արել...

Շուտով ելեք, եկեք, տարեք,
Զեր գառն ու ուլ գոմերն արեք:

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դրավ մի քարի՝ մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:

Լուսին իշխաններ և լան միասին,
Գընացին Զենով Օհանին առին.
— Տօ՛ Զենով Օհան, տօ՛ մահի տարած,
Էս խենթը բերիր արիր դառնարած,
Ո՞չ դառն է ջոկում, ոչ գելն ու աղվես,
Դազանով լըցրեց մեր քաղաքն էսպես,
Աստված կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թե չէ էս խալխին լեղաճաք կանի:

VII

Ելալ Օհանը, Դավթի մոտ գընաց.
— Հորեղբայր Օհան, հեռու եկ, կամաց,
Ուլեր կըփախչեն: — Մին էլ էնտեղից
Մի բող նապաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պըրծավ հանկարծ:
Դավիթն էր. ելալ, ետեից ընկած
Էն սարը քըշեց, ետ բերալ էս ձոր,
Բերալ, ուլերին խառնեց նորից նոր:
— Օ՛ֆ, ինչ դըժար է, հորեղբայր Օհան,
Աստված օխնել է էն սեսսե ուլեր,
Ամա բողալուկ էս ուլեր որ կան,
Փախչում են, ցըրվում ողջ սարերն ի վեր:

Էնքան եմ երեկ վաղել չարչարվել
Մինչև հավաքել ու տուն եմ բերել...

Նայեց Օհանը, ուլ Դավթի հաղին
Ոտնաման չի էլ մնացել կարգին,
Մահակն էլ մաշվել, մինչ բուռն է հասել,
Մի օրվա միջում էնքան /է վաղել:
— Դավթիթ ջան, ասավ, չեմ թողնի էսպես,
Բողալուկ ուլեր չարչարում են քեզ.
Էգուց նախիրը կըտանես արոտ.

Ասավ Օհանը ու մյուս առավոտ
Գընաց նորից նոր մեր Դավթի ոտի
Մի. ջուխտ նոր տրեխս բերավ երկաթի.
Երկաթի մի կուռ հարյուր լըդրական
Ու շինեց Սասմա քաղքի նախըապան:

VIII

Քըշեց նախիրը մեր նախըորդ հըսկան,
Ելավ Սասունի սարերն աննըման:

— է՛յ, ջան սարել,
Սասման սարել,
Ի՞նչ անուշ է
Զեր լանջն ի վեր...

Որ կանչեց, նրա ձենից ահավոր
Դըղոբդ՝ դըմդըմքոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գաղաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան,
Դավիթն էր ընկավ նրանց ետելից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Գել, ինձ, առյուծ, արջ վազը բըռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց
Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք:
Ոռնոց, մըռնչյուն, աղմուկ, աղաղմկ...
Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՞նչ տեսան,
Հենց քաղքի վըրա անհամար գաղան...

—Վայ, հարայ, փախեք...

Մեծեր, երեխեք,

Սլրտաճաք եղած,

Գործերը թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ:
Դավիթը եկավ կանգնեց մեյդանում.

—Վահ, էս քաղքըցիք ի՞նչ վաղ են քընում:

Հեյ կովատեր, հեյ գոմշատեր,

Ելեք շուտով բացեք դըռներ,

Ով մինն ուներ—տասն եմ բերել,
Ով տասն ուներ—քըսանն արել:
Շուտով ելեք, եկեք, տարեք,
Զեր եղն ու կով գոմերն արեք:

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:
Լուսին իշխաններ ելան միասին,
Գընացին ձենով Օհանին ասին,
—Աման, քեզ մատաղ, այ Օհան ախպեր,
Մեր եղն ու մեր կով թող մընան անտեր,
Միայն սրանից աղատ արա մեզ:
Ոչ արջն է ջոկում, ոչ գոմեշն ու եղ,
Մի օր էս քաղքին փորձանք կըբերի,
Արջերոց կանի կըտա կավերի:

IX

Դավիթ չդառավ, մի կըրակ դառավ,
Ճարը կըտըրված՝ Օհանը բերավ
Նետ-աղեղ շինեց ու տըվավ իրեն՝
Գընա, որս անի սարերի վըրեն:

Դավիթ նետ-աղեղն առավ Օհանից,
Նեռացավ Սասմա քաղքի սահմանից
Ու դառավ որսկան։ Գնաց մի կորկում
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անորդի մի ծեր կընկա մոտ,
Վիշապի նըման, երկար, ահագին
Մեկնըվում, քընում կըրակի կողքին։
Մի օր էլ երբ որ իր որսից դարձավ
Պառավը վըրեն սաստիկ բարկացավ։
— Վայ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,
Դժւ պետք է էն հոր զավակը լինես։
Զեռից ու ոտից ընկած մի ծեր կին—
Ես եմ ու էս արտն աստըծու տակին,
Ինչու ես գընում, տափում, տըրոխում,
Իմ ամբողջ տարվա ապրուստը կըտրում։
Թե որսկան ես դու—նետ-աղեղըդ առ,
Ծըծմակա գըլխից մինչև Սեղանսար
Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ,
Որսով մեջը լի որսի սար ուներ.
Եղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա.
Կարող ես—գընա, էնտեղ որս արա։
— Ի՞նչ ես, այ պառավ, էլ ինձ անիծում.

Ես ջահել եմ դեռ, ես նոր եմ լըսում,
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...
— Գընա, հորեղբայրդ—Օհանը կասի:

X

Հորեղբոր շեմքում մյուս օրը ծեզին
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին:
— Հորեղբայր Օհան, ինչու չես ասել՝
Իմ հերը որսի սար է ունեցել,
Այծյամ կա էնտեղ, եղջերու, կըխտար.
Վեր կաց, հորեղբայր, աար ինձ որսասար,
— Վայ, կանչեց Օհան, էդ քու խոսքը չէր,
էդ ով քեզ ասավ, լեզուն պապանձվեր:
Էն սարը, որդի, գընաց մեր ձեռից,
Էն սարի որսն էլ գընաց են սարից,
Էլ չկան այծյամ, եղջերու, կըխտար:
Թանի լուսեղեն քու հերը դեռ կար,
(Էյ գիդի օրեր—որտեղ եք կորել),
Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Թու հերը մեռավ, առտված խըռովեց,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Եկավ, մեր երկիր քարուքանդ արավ,

Ես սարի որսն էլ թալանեց, տարավ,
Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալբաթ էսպես էր գրած:
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըրա թագավոր ձենըդ կիմանա...
— Մըրա թագավոր ինձ ի՞նչ կանի որ...
Ես ի՞նչ եմ հարցնում Մըրա թագավոր.
Մըրա թագավոր թող Մըրը կենա,
Իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...
Վեր կաց, հորեղբայր, նետ-աղեղդ առ,
Կապարձըդ կապիր, գընանք որսասար:
Ելավ Օհանը ճարը կըտըրված,
Գընացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.
Անտառը ջարդած, պարիսպն ավերած,
Բուրգերը արած գետնին հավասար...,,

XI

Գիշերը հասավ, մընացին էնտեղ:
Զենով Օհանն էր, իր նետն ու աղեղ
Դըրավ գըլխի տակ, հանգիստ խըռըմփաց.
Դավիթը մնաց մըտքի ծովն ընկած:
Գընաց ու գընաց, բարձրացավ մի սար,

Մին էլ նկատեց, որ մութը հեռվում
Մի թեժ, փայլիլուն կըրակ է վառվում:
էն լուսը բըռնած՝
Վեր կացավ, գընաց,
Գընաց ու գընաց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար
Կիսից պատըռված,

Ու միջից վառված

Բըխում է լուսը պարզ, քուլա-քուլմ,
Բարձրանում, իջնում յետ քարի վրա:
Վար եջմիշ Դավիթ էնտեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Զենով Օհանին:

— Ե՛ւ հորեղբայր, քանի՞ քընես,
Ե՛ւ, էն պայծառ լուսը մի տես:
Լուս է իջել բարձը սարին,
Բարձը սարին, մարմար քարին,
Ե՛ւ, հորեղբայր, անուշ քընից.
Էն ինչ լուս է բըխում քարից:
Ելավ, խաչ քաշեց Օհանն երեսին.
— Ե՛յ, որդի, ասավ, մեռնեմ իր լուսին,
Էն մեր Մարտիրա սարն է զորավոր:
Էն լուսի տեղը կանգնած էր մի օր

Սասմա ապօվեն, Սասմա պահապան
Մեր սուրբ Տիրամոր վանքը Զարխափան:
Մըշտական, երբ որ կըուիվ էր գընում,
Էնտեղ էր քու հերն իր աղոթքն անում:
Քու հերը մեռավ, աստված խըռովեց,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Մեր վանքն էլ ևկավ քանդեց էն սարում,
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դավիթը էս էլ երբ որ իմացավ,
— Անուշ հորեղբայր, հորեղբայր, ասավ,
Որբ եմ ու անտեր աշխարհքի վըրա,
Հեր չունեմ՝ դու ինձ հերություն արա:
Էլ չեմ լիջնի ես Մարութա սարից,
Մինչև չշինեմ մեր անքը նորից:
Քեզանից կուղեմ հինգ հարյուր վարպետ,
Հինգ հազար բանվոր մըշտակ նըրանց հետ,
Որ դան, էս շաբաթ կանգնեն ու բանեն,
Առաջվան կարգով մեր վանքը շինեն:
Գընաց Օհանը ու բերավ իր հետ
Հինգ հազար բանվոր, հինգ հարյուր վարպետ:

Վարպետ ու բանվոր եկան կանքնեցին,
Զըրըխկ հա թըրըխկ, նորից շինեցին,
Առաջվան կարգով, փառքով փառավոր
Բարձըր Մարութա վանքը Տիրամոր:
Ճըրված միաբանք ետ նորից եկան,
Նորից թընդացին աղոթք, շարական.
Ու երբ շեն արավ հոր վանքը նորից,
Ճած իջավ Դավիթ Մարութա սարից:

XIII

Համբավը տարան Մըսրա Մելիքին.
— Հասլան չես ասիլ՝ Դավիթը կրկին
Հոր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարվան խարջը չես առել:
Մելիք զայրացավ.

— Գընացեք, ասավ,
Բագին, Կողբագին,
Սյուլին, Զարխաղին,
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,
Իմ օխտը տարվան խարաջը բերեք:
Քառուն կույս աղջիկ բերեք արմաղան,
Քառուն կարճ կընիկ, որ երկանք աղան,

Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
իմ տանն ու դուան դարավաշ դառնան:

Ու Կողբադին առավ զորքեր.

— Գըլիսիս վրա, ասավ իմ տեր.

Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը ջընջեմ հայոց աղղի.

Ասավ, Մըսրա աղջիկ ու կին

Պար բոնեցին ու երգեցին.

— Մեր Կողբադին գընաց Սասուն,
Կանայք բերի քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան:
Զան Կողբադին, քաջ Կողբադին,
Սասմա Դավթին զարկեց գետին:

Ու Կողբադին փըքված, ուռած,

— Շնորհակալ եմ, քույրեր, դոռաց,
Մինչև գալըս դեռ համբերեք,
ին ժամանակ պիտի պարեք...

Էսպես երգով,
 Զոռովիլ զորքով
 Գոռու կողբադին մըտավ Սասուն.
Օհան լըսից՝ կապվեց լեզուն
 Աղ ու հացով,
 Լաց ու թացով
 Առաջն ելավ,
 Խընդիքք արավ.
 — Ինչ որ կուզես, առ, տար, աման,
 Վարդ աղջիկներ կանայք Սասման,
 Դառը դատած դեղին ոսկին,
 Միայն թե գլթա մեր խեղճ աղջին,
 Մի-կոտորիր, մի տար մահու,
 Վերև՝ աստված, ներքեւ՝ դու...
 Ասավ, բերավ շարան-շարան
 Վարդ աղջիկներ, կանայք Սասման:
 Ու կողբադին կանգնեց, ջոկեց,
 Մարագն արավ, դուռը փակեց,
 Քառսուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,
 Քառսուն կարճ կնիկ, որ երկանք աղան,
 Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,

Մըսրա Մելիքին դարավաշ դառնան:
Դեղ-դեղ կիտեց դեղին ոսկին.
Աև սուդ կալավ հայոց ազգին:

ХV

Հեյ, ուր ես, Դավիթ, հայոց պահապան,
Քարը պատըալի—դժւրս արի մեյդան:

Թանդած հոր վանքը՝ որ շինեց նորից,
Ճած իջավ Դավիթ Մարութա սարից,
Ժանդոտած, անկոթ մի շեղբիկ գըտավ,
Գընաց՝ պառավի շաղգամը մտավ:
Պառամը էր. եկավ անեծք, աղաղակ.

— Վայ, խելառ Դավիթ, շաղգամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցավ ուտես, ասավ,

Թու աչքն աշխարհքում մենակ ի՞նձ տեսավ.
Կորեկըս արիը գետնին հավասար,
Էս էր մընացել ձըմքուլան պաշար,
Էս էլ կտրում ես,

Էլ ո՞նց ապրեմ ես:

Թե կըրտիճ ես դու, աղեղդ առ, գընա,
Թու հոր աշխարհքին տիրություն արա,
Թու հոր գանձը կեր,

Թողել ես անտեր,
Մըսրա թագավոր զըրկել է՝ տանի:
— Ել ի՞նչ ես վըրես բարկանում, նանի:
Էդ ի՞նչ ես ասում, ես չեմ հասկանում,
Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում...
— Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում...
Մըսրա թագավոր քու աչքն է հանում,
Դանդալոշ Դավիթ. զըրկել է հըրեն,
Եկել են Սասմա քաղաքի վըրեն
Բաղին, Կողբաղին,
Սյուդին, Զարխաղին,
Թալան են տալի բովանդակ Սառում,
Քառսուն բեռ ոսկի խարաջ են ուզում,
Քառսուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,
Քառսուն կարճ կնիկ, որ երկանք աղան,
Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին զարավաշ դառնան:
— Ի՞նչ ես, այ պառավ, Ել ինձ անիծում,
Ճույց տուր մի տեսնեմ— սրտեղ են ուզում:
— Որտեղ են ուզում... Մահըս տանի քիզ.
Դու պետք է էն հոր զավակը լինես...
Եկել ես՝ էստեղ շաղպամ ես լափում,
Ոսկին Կողբաղին ձեր տանն է չափում,
Աղջիկներ վըրեն մարագն են լըցրած:

Շաղզամը թողեց Դավիթ ու գընաց:
Տեսավ՝ Կողբագին իրենց տան միջին
Զափում է ոսկին թեղած առաջին,
Այուղին, Զարխագին պարկերն ին բլոնել,
Զենով Օհանն էլ շըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
Տեսավ, աչքերը արնով լըցվեցին:
— Վեր կաց, Կողբագին, հեռու կանգնիր դու,
Իմ հոր ոսկին է—ես իմ չափելու:
— Կողբագին ասավ.—է՞յ, Զենով Օհան,
Կըտաս—տուր խարջը էս օխտը տարվան,
Թե չէ, կը դնամ, միրուքըս վըկա,
Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը գա,
Զեր Սասմա երկիր քարուքանդ կանի,
Տեղը կը վարի, բոստան կը ցանի:
— Կորեք, անզգամ դուք Մըսրա շըներ,
Բա չեք իմացել դուք Սասմա ծըռեր...
Մեռած եք կարծում դուք մեղ, թե՛ շվաք,
Կուղեք մեր երկիրը դընեք խարջի տակ...

Բարկացավ Դավիթ, չափը շըպըտեց,
Տըվավ Կողբագնի գըլուխը ջարդեց,
Զափի փըշըանքը պատն անցավ, գընաց,

Մինչև օրս էլ դեռ դընում է թըռած:
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց տշխարհքից փախան դընացին —
Բաղին, Կողբագին,
Սյուդին, Զարխագին:

XVI

— Վայ, վայ, հորեղբայր, ինչ ասեմ ես քեզ.
Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դեղ.
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի դըռան...

Հորեղբայրն ասավ — Ա՛յ խենթ, խելագար
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցըլ լինի աչքը մեզ վլրա:
Չըտըվիր, հիմի որ զորք առնի՝ դա,
Սասմա քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ գեմը կերթա, ո՞վ կըոխվ կանի:
— Դու կաց, հորեղբայր, թող դա, Ես կերթամ,
Կերթամ, ես նըրան պատասխան կըտամ:
Ու մութ մարագի դըռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց:

— Դընացեք, ասավ, աղաւա ապրեցեք,
Սասունցի Դավթին արև խընդընեցեք:

XVII

Կոպես ջարդված, արյունլըվա
Փախան, ընկան հողը Մըսրա
Բագին, Կողբադին,
Սյուդին, Զարխադին,
Մըսրա կանայք հեռվից տեսան,
Հեռվից տեսան, ուրախացան
Ու ծափ տըվին կըտերներին.
— Եկան, եկան, բերին, բերին...
Մեր Կողբադին դընաց Սասուն,
Կանայք բերավ քառսուն-քառսուն
Կարմիր կովեր բերավ կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան:
Հենց մոտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Քըրքըջացին
Ու կանչեցին.
— Է՞ յ, Կողբադին մեծաբերան,
Է՞ դ ժրտեղից լերան-լերան,

Լերան-լերան կըդաս փախած,
Հաստ գըլուխըդ կիսից ճըղած:
Էն դժւ չասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր ավեր անեմ:
Գացիր Սասուն քանց գել դազան,
Ետ ևս գալիս քանց շուն վազան...
Ու կողբադին խիստ բարկացավ.
— Սուս կացեք դուք, լըրբեր, — ասավ.
Զեր մարդիկն եք տեսել դուք դեռ,
Դուք չեք տեսել Սասմա ծըռեր:
Սասմա ծըռեր լերան-լերան,
Նետեր ունեն մի-մի գերան,
Սասմա երկիր քար ու կազան,
Դըժար սարեր, ձոր ու ծազան.
Նըրանց խոտեր — ինչպես կեռ թուր,
Զորք չարդեցին երեք հարյուր...
Ասավ ու էլ չառավ դադար,
Վըռադ-վըռադ, գըլիսապատառ
Վազեց իրեն թագավորին:
Խընդաց թագվորն իր աթուին:
— Ապլես, ապլես, քաջ կողբադին,

Արժե՞ կախեմ ես քո ճըտին
Մեր զուղղունի մեծ նշանը—
Պարզե քու մեծ հաղթությանը:
Ու՞ր են, հապա առաջըս բեր
Սասմա ոսկին ու աղջիկներ:

Ասավ Մելիք, ու Կողբաղին—
Դըլուխ տըվավ մինչև գետին.

— Ապրած կենաս, մեծ թագավոր,
Չոռնվ փախա ես ձիավոր,
Ո՞նց բերեի Սասմա ոսկին:
Մի խենթ ծընվեց հայոց աղջին,
Ոչ ահ գիտի, ոչ տեր ու մեծ,
Դըլուխս էսպես տըվավ, ջարդեց,
«Չեմ տալ ասավ, իմ հոր ոսկին,
Չեմ տալ կանայքն իմ հայ աղջին,
Սասմա երկիր ձեղ տեղ չըկա...

Քու թագավոր, ասավ, թող գա,
Թող գա՝ ինձ հետ կըսիվ անի,
Թե զոչաղ է զոռով տանի:
Կատաղեց, փըրփիրեց Մորա թագավոր.

— Կանչեցեք, ասավ, իմ զորքը բոլոր.
Հաղար հաղար մարդ նորելուկ մանուկ,
Հաղար հաղար մարդ անըեխ, անմորուք,

Հաղար հաղար մարդ բեխը նոր ծըլած,
Հաղար հաղար մարդ նոր թախտից ելած,
Հաղար հաղար մարդ թուխ միրուքավոր,
Հաղար հաղար մարդ սիպտակ ալնոր,
Հաղար հաղար մարդ, որ փողեր հընչեն,
Հաղար հաղար մարդ, որ թըմքուկ զարկեն...
Կանչեցէք, թող գան, հագնենք զենք, զըրան,
Կըոիվ տի գընամ եւ Դավթի վըրա,
Սասուն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ:

XVIII

Էսպես անհամար զորքեր հավաքեց,
Եկավ Սասմա դաշտ, բանակը զարկեց
Ու ծանըր նըստեց Մըսրա թագավոր:
Էնքան ահագին բազմությունն էն օր
Բաթմանա ջըրին եկավ ու չոքեց,
Ով եկավ, խըմեց—գետը ցամաքեց,
Սասմա քաղաքում մընացին ծարավ:
Զենով Օհանին զարմանքը տարավ:
Քուրքը ուսն առավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ի՞նչ տեսավ.
Ճերմակ վըրանից դաշտը ճերմակեւ

Ասես՝ էն գիշեր ձըմեռը եկել,
Սպիտակ ճյունով պատել էր Սասուն:
Լեղին ջուր կըտրեց, կապ ընկավ լեզուն,
Հարայ կանչելով՝ փախավ տուն ընկավ.
— Վայ, փախեք, եկամվ... հայ, հարայ, եկամվ...
— Ի՞նչը, հորեղբայր, ի՞նչը, ի՞նչն եկավ...
— Ցավըն ու կըրակը Դավթի պինչն եկավ:
Մըրա թագավորն ելել է, եկել
Եկել, մեր դաշտին բանակ է դարկել.
Թիվ կա աստղերին, թիվ չըկա զորքին...
Վայ մեր արևին, վայ մեր աշխարհին...
Եկ, ուկի տանենք, աղջիկներ տանենք,
Չոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գըթա,
Մեղ սըրի չըտա...
— Դու կաց, հորեղբայր, դու դարդ մի անիր...
Գընա, քու օդում դու հանդիստ քընիր.
Հիմի ես կելնեմ, Սասմա դաշտ կերթամ,
Մըրա-Մելիքին պատասխան կըտամ:
Ու գընաց Դավիթ ծանոթ պառավին.
— Նանի ջան, առավ, ժանգուտած ու հին
Երկաթի կըտոր, անթարոց շամփուր,
Ինչ ունես չունես՝ հավաքիր, ինձ տուր,

Մի էշ էլ գտիր, որ վըրեն նստեմ,
Կըռիվ տի գնամ Մըրա դորքի դեմ:
— Վայ, Դավիթ, ասավ, մահս տանի քեղ
Դժու պետք է էն հոր զավակը լինես...
Ուր է քու հոր հըրեղեն ձին,
Ուր է քու հոր Թուր-Կեծակին,
Ուր է քու հոր գոտին ոսկի.
Խաչ պատրաստին իր աջ բաղկի,
Ուր է քու հոր ծալ-ծալ կապեն,
Գուրզը պողպատ, թամբ սաղափեն,
Որ եկել ես, այ խենթ ու ծուռ,
Ինձնից կուղես էշ ու շամփուր...
— Ի՞նչ ես, նանի, էլ բարկանում,
Զահել եմ ես, չեմ իմանում.
Ես քեզնից եմ լըսում էսօր.

Զենք ու զըրահ մւր են իմ հոր:
— Հորեղբորըդ գընա հարցուր.
Ուր են, ասա, հանիր, բեր, տուր:
Բան է, թե որ չըտա սիրով,
Աչքը հանիր՝ խըլիր զուով:

XIX

Դավիթ գընաց Օհանի մոտ.
— Էյ հորեղբայր, իմ հերահոտ,

Տուր ինձ իմ հոր հըրեղեն ձին.
Տուր ինձ իմ հոր Թուր-Կեծակին,
Տուր ինձ իմ հոր գոտին ոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Տուր ինձ իմ հոր ծալ-ծալ կապեն,
Դուռզը պողովատ, թամբ սադափեն...
— Քու հոր մահվան տարուց—օրից
Դուքս չեմ հանել ձին ախոռից,
Ո՞չ սընդուկից՝ Թուր-Կեծակին,
Չըրահ, շապիկ, ոսկի գոտին...
Ինձ թող, աման, մի սպանիր,
Կուղես—հըրեն, գընա հանիր:

XX

Հագավ Դավիթ զենքն ու զըրահ,
Կապեց գոտին, Թուր-Կեծակին,
Խաչն էլ իր հաղթ բազկի վըրա,
Ելավ, հեծավ Առյուծ հոր ձին,

Հոր ձին հեծավ՝ ասպանդակեց,
Աստված կանչեց, ձենով երգեց.
— Սասմա քու յրեր, բարով մընաք,

Քուրություն եք արել ինձ,
Սասմա մերեր, բարով մընաք,
Մերություն եք արել ինձ:

Ախալեր տըղեք, բարով մընաք,—
Մեր աշխարքին, մեր հանդին,
Խընդում անեք, թե հանդ դընաք,
Զըմոռանաք ձեր Դավթին:

Բարով մընաք դուռ ու դըրկից,
Մեծով փոքրով... մնաք բարով,
Ես կըպակսեմ մեր աշխարհքից,
Դուք ապրեցեք բախտավոր:

Ծովասարի պաղ աղբյուրներ,
Բարով մընաք, ախ մընաք,
Կըոիվ կերթամ, կը ծարավեմ,
Դուք հորդ մընաք, պաղ մընաք:

Ծովասարի անուշ հովեր,
Բարով մընաք զնվ մընաք—
Կըոիվ կերթամ, ես կըշոգեմ,
Դուք զով մընաք, հով մընաք:

Է՞յ հերահոտ իմ հորոխապեր,
Բարով մընաս Սասմա տուն,
բերնով օրհնիր
Քո ծուռ Դավթին, քու որդուն:

Զենով Օհան լալով երգեց.
-- Ափսոս, հազար ափսոս հըրեղեն մեր ձին,
Ա՛խ, հըրեղեն մեր ձին.
Ափսոս, հազար ափսոս մեր ոսկի գոտին,
Ա՛խ, մեր ոսկի գոտին.
Ափսոս թանկ կապեն, որ հագին տարավ,
Ա՛խ, որ հագին տարավ...

Դավիթ բարկացավ,
Զին քշեց, դարձավ,
Օհանը վախեց,
Իր երգը փոխեց.
«Ափսոս, նորելուկ Դավիթըս կորավ,
Ա՛խ, Դավիթըս կորավ»:
Էս որ իմացավ,
Դավիթ մեղմացավ,
Իջավ Օհանի ձեռքը համբուրեց:
Զենով Օհանն էլ, ինչպես հայր ու մեծ,

Օրհնեց, խրատեց նըրան հայրաբար,
Դեղի Սասմա դաշտ դըրավ ճանապարհ:

XXI

Մասունցի Դավթին ուներ մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ աժդանա:
Սա էլ իմացավ համբավը կըովի,
Մի բարդի ուսին գալիս է ահա:
Դալիս է՝ հեռվից բարձըր գոռալով.
— Ի՞նչ եք վեր եկել էս դաշտի միջում,
Քանի՞ գըլխանի մարդիք եք, կամ՝ ով,
Մասունցի Դավթին որ չեք ճանաչում...
Բա չեք իմանում, որ էստեղ է նա
Դալու՝ խաղացնի իր ձին թեավոր.
Չըվեցեք հիմի ուր որ է՝ կըդա,
Եկել եմ սըրբեմ մեյդանը էսօր:

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըլան...
Դավթին էլ ահա սարի դագաթին
Կանգնած գոռում է վիշապի նըման.
— Ով քընած եք՝ արթուն կացեք,

Ով արթուն եք՝ ելեք, կեցէք,
Ով կեցել եք՝ զենք կապեցէք,
Զենք եք կապել՝ ձի թամբեցէք,
Զի եք թամբիլ՝ ելեք, հեծեք,
Հետո չասեք՝ թե մենք քընած—
Դավիթ գող-գող եկավ, դընաց...

Էսպես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կեծակ զարկի,
Մըսրա զորքի մեջտեղ զարկեց,
Շողացնելով թուր-կեծակին:

Զարդեց, փըշըց մինչև կեսօր.
Լեսօր արինն ելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հաղարավոր
Մարդու դիակ ողջ միատեղ:

Կար զորքի մեջ մի ալեսօր,
Աշխարհք տեսած ու բանադես.
— Տըղերք, ասավ, ճամբա տըվիք,
Դընամ խոսեմ ես Դավիթի հետ:

Դընաց, կանդնեց Դավիթի առաջ,
Էսպես խոսեց էն ծերունին.

— Դալար կենա կուռըդ, ով քաջ,
Սուրբ կըտրում միշտ քու ձեռին:

Մի ծերունուս խոսքին մըտիկ,
Տես, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՞ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամբին խեղճ ու կըրակ:

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընաղ աղքատ ու ծեր,
Որը լացով, քողն երեսին
Նորապլասակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-թըրով
Հավաքել է, էստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք պակաս օրով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք աբեյ:

Թագավորն է քու թըշնամին,
Կըոխիվ ունես—իբ հետ արա,

ՀԵ՞Ր ես քաշում Թուր-Կեծակին
Ես անձարակ խալխի վըրա:

— Լավ ես ասում դու, ծերունի,
Ասավ Դավիթն ալմորին,
Բայց թագավորն ուր է հիմի,
Որ սև կապեմ նըրա օրին:

— Մեծ վըրանում քընած է նա,
Է՞ն, որ միջից ծուխը կելնի.
Էն ծուխն էլ հո ծուխ չի որ կա,
Գոլորշին է իր բերանի:

Ասին. դեպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քըշեց, գընաց ու դըռանը
Գուաց կանգնած արաբներին,

— Ու՞ր է ասավ, ի՞նչ է կորել,
Դուքս կանչեցեք գա ասպարեզ,
Թե մահ չունի մահ եմ բերել,
Գրող չունի՝ գըրող եմ ես...

— Մելիքն, ասին, քուն է մըտել
Օխտը օրով պետք է քընի.

Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
Շիկնած տըվին մերկ թիկունքին:

— Օ՞ք, էլ հանդիստ քուն չունի մարդ
էս անիրավ մոծակներից.

Աչքը բացավ հըսկան հանդարտ,
Ուզում էր ետ քընել նորից,

Տեսավ՝ Դավթին: Գըլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըռընչալով,
Փըչեց վըրեն, որ թըռցընի
Էն աժդըհին մի փըչելով:

Տեսավ, տեղից ժաժ չի գալիս,
Զարմանքն ու ահ պատեց հոգին:
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց,
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց.

— Բարձրվ, Դավիթ, հոգնած ես զեռ.
Եկ, մի նստիր, խոսենք կարդին,

Հետո դարձյալ կըոիվ կանենք,
Եթե կըոիվ կուղես կըրկին...

Իր վըրանում բռնակալը
Քառասուն գազ խոր հոր էր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի վըռել:

Ում որ հաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
Էն կորստյան հորի վրա:

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
Գընաց նըստեց... ընկավ հորը:
— Հա, հա, հա, հա, քահ-քահ խընդաց
Մըսրա դաժան թագավորը:

— Դե, թող հիմի գընա՝ խավար
Հորում փըթի, էնքան մընա:
Ու ահագին մի ջաղացքար
Բերավ, գըրավ հորի վըրա:

XXII

Քընեց են դիշեր Զենով Օհանը.
Դիշերն երազում երևաց ծերին՝
Մըսրա երկընքում արև ճառադած,
Սև ամպ էր պատել Սասմա սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռավ տեղից,
— Վայ, կընիկ, ասավ, մի ճըրագ արա,
Գընաց մեր անփորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վըրա:

— Հողեմ գըլուխտ, ասավ կընիկը,
Ո՞վ գիտի՝ Դավիթն ուր է քեֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում:

Քընեց Օհանը: Վերկացավ դարձյալ.
— Կընիկ, Դավիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրա վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հիվանդ ցոլքում դալկացած:

— Ի՞նչ եղավ քեզ, մարդ, գիշերվան կիսին
Բարկացավ վըրեն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին
Շուռ եկավ, քընեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ՝ երկընքի բարձըր կամարում
Վառվում էր Մըսրա աստղը փառահեղ,
Սասմա աստղիկը սուզվեց խավարում:

Զարթնեց վախեցած:—Տունըդ քանդվի, կի՞ն
Ես ո՞նց լըսեցի քու էդ կարճ խելքին.
Կորավ մեն-մենակ մեր ջահիլն անտեր
Վէր կաց, շնուր արա, զենքերըս մի բեր....

XXIII

Ելավ Օհան, գոմը մըտավ,
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.
Էյ, ճերմակ ձի, մինչ Երբ,—ասավ,
Կըհասցնես Դավթի կըովին:

«Մինչև լուսը կհասցնեմ».
Ու ձին տըվավ փորը գետին:
— Մեջքդ կոտրի, լուսն ի՞նչ անեմ
Լաշին համսեմ, ես թե՞ նաշին:
Կարմիր ձիու մեջքին զարկեց,
Սա էլ երես փորը գետին:

— Զան կարմիր ձի, մինչ երբ դու ինձ
Կըհասցնես Դավթի կըովին:

«Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կըհասցընեմ Դավթի կըովին»:

— Լեղի՛ դառնա, սև մահ ու ցավ,
Ինչ տըվել եմ քեզ՝ էն գարին:

Հերթը եկավ սևին հասավ.

Դետին չերետ փորը սև ձին:

— Է՞յ, ջան Սևուկ, մինչ երբ, ասավ,
Կըհասցընեմ Դավթի կըովին:

«Եթե ամուր մեջքիս մընաս,

Ոտըդ դընես ասպանդակին,

Մինչև մեկել ոտըդ շուռ/տաս,

Կըհասցնեմ», ասավ սև ձին:

XXIV

Սև ձին քաշեց Զենով Օհան,

Զախը դըրավ ասպանդակին,

Աջն էլ մինչև շուռ տար վըրան,

Կանգնեց Սասմա սարի գըլիսին:

Տեսավ՝ Դավթի նըժույդն անտեր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքեւ Մըսրա զորքը չոքած,
Ինչպիս անծեր ծըփուն մի ծով:

Օխտը գոմշի կաշի հագավ,
Որ չպատոի իրեն զուից,
Կանգնեց Օհան, ամպի նըման
Գոռաց Սասմա սարի ծերից:

— Հեյ-հեյ, Դավթիթ, որտեղ ես զու.
Հիշեր խաչը քո աջ բաղկի,
Սուրբ Տիրամոր անունը տուր,
Լուսը դուրս եկ՝ արեգակի:

Զենը գընաց դըմդըմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
— Հայ-հայ, ասավ, հորեղբայրս է.
Սասմա սարից ինձ է գոռում:

Ո՞վ Մարութա աստվածածին,
Խաչ պատրաստի իմ աջ բաղկի,
Զեզ եմ կանչել էս նեղ ժամին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես ղարկեց ջաղացքարին՝

Քարը եղավ հաղար կտոր,

Կըտորները երկինք թըռան,

Ու գընում են մինչև էսօր:

Ելավ հորից, կանգնեց ահեղ:

Սարսափ կալավ դև Մելիքին:

— Դավիթ ախպեր, եկ դեռ էստեղ,

Սեղան նըստենք, խոսենք կարգին...

— Եւ չեմ նստիլ ես քու հացին,

Դու տըմարդի վախկոտ ու նենդ.

Շնուտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,

Դնուրս եկ մեյզան, կըոիվ անենք:

— Կըոիվ անենք, ասավ Մելիք,

Իմն է միայն զարկն առաջին:

— Քոնն է, զարկիր, կանչեց Դավիթ,

Գընաց, կեցավ դաշտի միջին:

Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,

Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,

Քըշեց գընաց մինչ Դիարբեքիր

Ու էնտեղից եկավ կըրկին:

Երեք հազար լիդր էր քաշում

Հըսկայական իր մըկունդը.

Եկավ, դարկեց, կորավ փոշում

Ու երերաց երկրի գունդը:

— Երկիր քանդվեց կամ ժաժք եղավ,

Ասին մարդիկ շատ աշխարհքում:

— Զէ, ասացին, արնի ծարավ

Հըսկաներն են իրար դարկում:

— Մեռավ Դավիթ էս մի զարկից,

Ասավ Մելիքն իրեն զորքին:

— Կենդանին եմ, ամպի տակից

Գոռաց Դավիթ Մըսրա-Մելքին:

— Հայ-հայ, մոտիկ տեղից եկա,

Տես, որտեղից հիմի կըգամ:

Ու վերկացավ, կանգնեց հըսկան,

Իր ձին հեծավ երկրորդ անգամ:

Երկրորդ անգամ քըշեց Հալաբ

Ու բաց թողեց ձին Հալաբից.

Բուք վեր կացավ, տեղ ու տարավ,

Նրար աշխարհ դողաց թափից:

Եկավ զարկեց, զարկի ձենից
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան:
— Դընաց Դավիթ Սասմա տանից,
Դուժեց գուռող Մըռա արքան:

— Կենդանի՛ եմ, կանչեց Դավիթ,
Մին էլ արի՛—հերթն ինձ հասավ,
— Հայ-հայ, մոտիկ տեղից եկա,
կանչեց Մելիք ու վեր կացավ:

Երբորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըռա,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, եկավ Դավիթի վըրա:

Եկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըը զարկով հըսկայական,
Փոշի ելավ Սասմա դաշտից,
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր
Փոշին կանգնեց ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բոթը տըվին Դավիթի մահվան:

Երբ որ անցավ երեք օրը,
ին ամպի պես կանգնած փոշում
կանգնեց Դավիթ, ինչպես սարը
Գլրդուռ սարը մեզ~մըշուշում:

— Մելիք, ասավ, ումն է հերթը:
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռող հոգին:

Գլնաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն էն խավար,
Վըրեն քաշեց քառառւն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռնչալով ելավ տեղից
Էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց թուր~կեծակին:

Առաջ վազեց մազերն արձակ
Մելքի պառավ մայրը ջաղու。
— Դավիթ, մազըս առ ոտիգ տակ,
Էդ մի զարկը ինձ բաշխի դու:

Երկրուրդ անգամ թուրը քաշեց.
Էս անգամ էլ եկավ քույրը.
— Դավիթ, եթե կուզես, կանչեց,
իմ սըրտին զարկ երկրուրդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Ելավ Դավիթ երրորդ անգամ.
— Էս մի զարկն ու աստված, ասավ,
էլ մարդ չըգա, պետք է որ տամ:

Էս անգամ էլ քեռի Թորոսն
Առաջ եկավ ձեռն արած զեմ.
— Դավիթ, ասավ, լավ իմանաս,
Կըշեռք պիտի քըցեմ, քաշեմ:

Մըսրտ-Մելքի երկու կեսը
Թե հավասար չեկան իրար,
էլ չտեսնես իմ երեսը,
Դավիթ չես էլ դու ինձ համար:

Ասավ, ելավ ու փոթուրկեց,
Թըռավ, ցոլաց Դավիթի հուր ձին,
Զին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իշավ Թուր-Կհծակին:

Անցավ քառսուն գոմշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտքեց ժանտ հըրեշին,
Ոխտը դազ էլ դենը դընաց:

— Կենդանի՛ եմ, մին էլ արի՛
Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լըսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կեծակից...

— Մելիք, ասավ, թափ տուր մի քեզ:
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը՝ դեն:

Ես որ տեսավ Մըսրա բանակ,
Զուր կըտըրվեց ահ ու վախից,
Դավիթ կանչեց.—Մի վախենաք,
Ականջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչպար մարդիկ, ասավ,
Զուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հաղար ու մի կըրակ ու ցավ,
Հաղար ու մի հոգսեր ունեք:

Ի՞նչ եք առել նետ ու ապեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Չէ՞ որ մենք էլ ունենք տունտեղ,
Մենք էլ ունենք մանուկ թև ծեր...

Զանձրացնել եք խաղաղ ու հաշու
Հողագործի օր ու կյանքից,
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Չեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձեք եկած ճանապարհով
Չեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ զենք ու զուով
Վեր եք կացել դուք մեղ վրա,

Հորում լինեմ քառսուն դադ խոր
Թե ջաղացի քարի տակին,—
Կելնեմ ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասմա Դավիթ, Թուր-կեծակին:

Են ժամանակ աստված գիտի,
Ով մեղանից կըլնի փոշման.
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե դուք, որ մեղ արիք դուշման...

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040579

-53

A
I
5477

ԳԻՆԸ 1 ԱՆԻՔ.